



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

---- դեկտեմբերի 2017 թվականի N°---Ս
ք.Երևան

**«ԼՈՒՍԱԿՈՒՆՔ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի հունիսի 9-ի N°298Ս որոշմամբ «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Այրք ՓՇԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N°0358 լիցենզիան՝ մինչև 2025 թվականի հունիսի 9-ը գործողության ժամկետով, իսկ 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N°707Ս որոշմամբ՝ «Այրք ՓՇԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N°0382 լիցենզիան՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 8-ը գործողության ժամկետով,

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության համաձայն՝ տեղի է ունեցել Ընկերության մասնակցների փոփոխություն՝ Ընկերության 100 տոկոսի բաժնեմասի օտարմամբ, ինչի վերաբերյալ Ընկերությունը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չի տեղեկացրել Հանձնաժողովին,

գ) Հանձնաժողովը 2017 թվականի դեկտեմբերի 21-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար լիցենզավորված անձը դիմում է հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով.

2) 4-րդ կետի համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքներն իրականացնում են առանց հանձնաժողովի թույլտվության (համաձայնության), եթե այդ անձինք էներգետիկայի բնագավառում չունեն գործունեության այլ տեսակի լիցենզիա կամ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են հանձնաժողովին,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերի 26-ի գրությամբ հայտնել է, որ 2017 թվականի սեպտեմբերին տեղի է ունեցել Ընկերության 100 տոկոս բաժնեմասի վաճառք, ինչի վերաբերյալ ընկերությունը օրենքի չիմացության պատճառով Հանձնաժողովին չի տեղեկացրել,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետը՝ 100 տոկոս բաժնեմասի վաճառքի գործարքի վերաբերյալ գրավոր տեղեկացրել է Հանձնաժողովին դրա իրականացումից հետո, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
--- դեկտեմբերի 2017թ